Հեռախոսահամարի կարգավիճակ

Դելֆին, Պանտերա, Թիթեռ ,Արծիվ և Բացառիկ սակագնային պլանն ակտիվանում է, երբ համապատասխան սակագնային պլանին բաժանորդագրվելու ժամանակ վճարում եք ամսավճար՝ սակագնային պլանով սահմանված չափով:
Դելֆին, Պանտերա, Թիթեռ սակագնային պլանների համար նախատեսված բացառիկ գնով հեռախոսների ձեռքբերման առաջարկի շրջանակներում բջջային հեռախոս գնելու դեպքում բաժանորդագրվելու ժամանակ ամսավճարից բացի վճարում եք նաև բջջային հեռախոսի համար սահմանված վճարը:
Ծառայությունն ակտիվ կլինի մինչև հաջորդ ամսվա 20-ը: Ակտիվ շրջանում և դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ կարող եք ամբողջությամբ օգտագործել Ձեր սակագնային պլանում ներառված րոպեները, գումարը, SMS-ները և ՄԲ-երը (եթե առկա են), ինչպես նաև բացասական հաշվեկշռի սահմանաչափի շրջանակում օգտվել այլ ծառայություններից՝ զանգեր ընդունել և զանգել ցանկացած ուղղությամբ, ուղարկել և ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ, օգտագործել GPRS և այլ ծառայություններ: Ծառայությունների փաթեթների ակտիվացման, ինչպես նաև Իմ Ucom, Ucom զրույց, Ucom աշխարհ ծառայություններից օգտվելու համար հաշվեկշռին անհրաժեշտ է ունենալ լիցքավորած հավելյալ գումար: Վերջինիս բացակայության դեպքում այդ ծառայություններից օգտվելիս գանձումը կատարվում է բացասական հաշվեկշռի սահմանաչափից:
Բացասական հաշվեկշռի սահմանաչափից կարող եք օգտվել ակտիվ շրջանում և դրան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ, ընդ որում՝ յուրաքանչյուր ամսվա սկզբին բացասական հաշվեկշիռը Ձեզ տրամադրվում է ամբողջությամբ՝ ակտիվ շրջանի և դրան հաջորդող ամսվա համար առանձին-առանձին՝ ըստ սակագնային պլանի: Մինչև վճարման օրը (յուրաքանչյուր ամսվա 20-ը) վճարում չկատարելու դեպքում Ձեր ծառայությունն անցնում է պասիվ շրջան: Պասիվ շրջանը տևում է մինչև ընթացիկ ամսվան հաջորդող ամսվա ավարտը: Այս շրջանում Դուք կարող եք միայն ընդունել զանգեր, ստանալ կարճ և մուլտիմեդիա հաղորդագրություններ և կատարել զանգեր միայն առաջին օգնության անվճար համարներին: Ի դեպ, Ձեր հաշվեկշիռը, սակագնային պլանում ներառված գումարը, րոպեները, SMS-ները և ՄԲ-երը, Ucom միավորները, ակտիվ ծառայությունների փաթեթները և ավտոմատ ակտիվացված առաջարկները պահպանվում են նաև պասիվ շրջանում, սակայն Դուք չեք կարող դրանք օգտագործել:

Պասիվ շրջանում ցանկացած պահի կարող եք վերաակտիվացնել բոլոր ծառայությունները՝ պարզապես վճարելով նախորդ ամիսների և, ընթացիկ ամսվա ամսավճարները և բացասական հաշվեկշռից օգտագործված գումարը: Այնուհետև Դուք հնարավորություն կունենաք օգտագործել Ձեր սակագնային պլանում ներառված գումարը, րոպեները, SMS-ները և ՄԲ-երը, ինչպես նաև Ձեր բոնուսային միավորները, ծառայությունների փաթեթները և ավտոմատ ակտիվացված առաջարկները, եթե դրանց վավերականության ժամկետը չի լրացել: Պասիվ շրջանում ամսավճարը ենթակա է գանձման:
Եթե մինչև պասիվ շրջանի ավարտը Դուք չեք վճարում գոյացած պարտքերը, ապա ծառայությունը 1 ամիս ժամկետով կասեցվում է (ապաակտիվացվում է) : Նշված ամսվա համար Դուք ամսավճար չեք վճարում, ուստի և չեք ստանում Ձեր սակագնային պլանում ներառված գումարը, րոպեները, SMS-ները և ՄԲ-երը, իսկ առկա Ucom միավորները զրոյանում են: Կասեցման շրջանում Դուք դեռևս ունեք հնարավորություն վերաակտիվացնել բոլոր ծառայությունները՝ պարզապես վճարելով նախորդ ամիսների չվճարված ամսավճարները, առկա բացասական հաշվեկշիռը, ինչպես նաև ուշ վճարման համար սահմանված տույժերը: Նշված բոլոր վճարումները կատարելուց հետո Ձեր ծառայությունն ամբողջությամբ կակտիվանա: Խնդրում ենք հաշվի առնել, որ ընթացիկ ամսվա ընթացքում օգտագործված բոլոր ծառայությունների համար գանձումը կկատարվի Ձեր սակագնային պլանով նախատեսված բացասական սահմանաչափից կամ առկայության դեպքում՝ դրական հաշվեկշռից:
Եթե մինչև ծառայության կասեցման ժամկետը լրանալը պարտքն ամբողջությամբ չմարեք, Ձեր բաժանորդային պայմանագիրը կարող է միակողմանի լուծվել Ucom-ի կողմից առանց Ձեզ լրացուցիչ տեղեկացնելու՝ Ձեր հեռախոսահամարը հատկացնելով այլ բաժանորդի: Այդ դեպքում ծառայության վերաակտիվացումը կատարվում է ընդհանուր հիմունքներով: